ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌՑԱՆՑ ՆԻՍՏԻ

01.11.2020 *Ք. Իջևան*

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 20-ը

ՕՐԱԿԱՐԳ

1. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
2. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը ներկայացրեց 2020-21 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները: Նա նշեց, որ քննաշրջանը կազմակերպված էր պատշաճ կերպով՝ ժամանակացույցի համաձայն: Քննություններն ու ստուգումները իրականացվել են ZOOM հարթակով: Զեկուցողը ներկայացրեց, որ համավարակով պայմանավորված, տնօրենության կողմից որոշվել էր յուրաքանչյուր կուրսում իրականացնել ընդհանուր թվով երեք ընթացիկ ստուգում և ընթացիկ քննություն: Մնացած քննությունները տեղափոխվել են քննաշրջան: Ուսանողների կողմից հարցաշարերի հետ կապված խնդիրները լուծվել են ժամանակին, և տարաձայնություններ չեն եղել:

Ֆակուլտետում առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրված ակադեմիական պատկերը եղել է հետևյալը.

«Պատմություն» մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.76 և 7.39 միավոր (նախորդ ուստարում եղել է 3.21 և 6.72): «Պատմություն» մասնագիտությամբ ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին

գնահատական արձանագրվել է «ԽՍՀՄ-ի և Ռուս. հետխոր. շրջ. պ.» առարկայից՝ 4.38, իսկ ամենացածրը՝ «Նոր պատմ.-1.» առարկայից՝ 2.88: Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է «Դեմոկրատիայի պատմ. -1» առարկայից՝ 8.25, իսկ ամենացածրը՝ «Նախն. հաս. պատմ.» առարկայից՝ 6. 60:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 1-ին, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3. 75 և 7.54 միավոր (նախորդ ուստարում եղել է 3.85 և 7,83): Պետք է նշել, որ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է «Լեզվական վերլ. հիմ.» առարկայից՝ 4.11, իսկ ամենացածրը՝ «Հայ գրաքնն. պատմ.» առարկայից՝ 3. 60:

Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է «Ժամ. հայոց լեզվի ձևաբ. -1» առարկայից՝ 8.44, իսկ ամենացածրը՝ «Գրաբար-1» առարկայից՝ 6. 71:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.45 և 6.76 միավոր (նախորդ ուստարում եղել է 3.38 և 6.65): Պետք է նշել, որ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է «Թվաբան. հիմ-1» առարկայից՝ 3. 73, իսկ ամենացածրը՝ «Մայրենի լեզու-1» առարկայից՝ 3. 18:

Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է «Հոգեբ. հիմ.» առարկայից՝ 7. 82, իսկ ամենացածրը՝ «Մանկ. հիմ.» առարկայից՝ 5. 14:

«Հոգեբանություն» կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննություններից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 4.20 և 9. 57 միավոր, իսկ «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննություններից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 4. 00 և 7. 33 միավոր: «Ֆրանսերեն լեզու և գրականություն»

կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննություններից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3. 60 և 8. 91 միավոր:

«Օտար լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.65 և 6.71 միավոր (նախորդ ուստարում եղել է 3.32 և 6.86): Ընթացիկ քննության ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է «Ֆրանսերեն-5» և «Տեսական քերակ.» առարկաներից՝ 3.80: Ամենացածր միջին գնահատականը արձանագրվել է «Անգլերեն-7» առարկայից՝ 3. 50:

Անցկացվել է միայն մեկ ընթացիկ ստուգում «Ոճագիտություն» առարկայից՝ 6. 71:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.23 և 8. 32 միավոր (նախորդ ուստարում 3.25 և 6. 16): Ընթացիկ քննության ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է «Արտ. գրակ.-6» առարկայից՝ 4.11: Ամենացածր միջին գնահատականը արձանագրվել է «Ֆրանս.-7» առարկայից՝ 2.47:

Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է «Լեզվաբ. հիմ.» առարկայից՝ 8. 38, իսկ ամենացածրը՝ «Լատիներեն.» առարկայից՝ 8. 27:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի 1-ին միջանկյալ քննությունների ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյան: Զեկուցողը ներկայացրեց ամբիոններում կատարված քննարկումների արդյունքները: Ավարտական աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2020-2021 ուստարվա

սեպտեմբերից: Անհատական բեռնվածությամբ նախատեսված ավարտական աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաները, որոնք քննարկվել են ամբիոնային նիստերում, կատարվել են ուղղումներ: Ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախաձեռնությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ: Նշվեց, որ ավարտական աշխատանքների թեմաները համապատասխանում են պահանջվող չափանիշներին, ընտրված են այնպիսի թեմաներ, որոնք արդիական են, ուսանողի համար ներկայացնում են գիտական հետաքրքրություն:

Զեկուցողը նշեց, որ յուրաքանչյուր ղեկավար ամսվա մեջ որոշակի գրաֆիկով կոնսուլտացիոն հանդիպումներ է ունենում ուսանողների հետ: Այդ հանդիպումները իրականացվում են ZOOM հարթակում: Զեկուցողը նշեց, որ յուրաքանչյուր դասախոսի հանդիպման ժամանակացույցը հաստատված է ամբիոնի կողմից և փակցված է հայտարարությունների տախտակին: Զեկուցողը նաև ավելացրեց, որ, չնայած կատարվող աշխատանքներին, ավարտական աշխատանքների ընթացիկ վիճակը մի փոքր մտահոգիչ է: Ուսանողները դժվարություններ են ունենում գրադարաններում աշխատանքի, հարցումներ և հետազոտություններ իրականացնելու ընթացքում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոնային հաշվետվությունները ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Վ. Աղաբաբյան